ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի կարիքների համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/11 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ձևով էլեկտրոնային Armeps համակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատման հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի մասին

 հ. Մարտունի

«15» «ապրիլի» 2024թ.
ժամը 16:00

Հանձնաժողովի նախագահ՝ Թաթուլ Դավթյան
Անդամներ՝ Վարդան Մանուկյան
Վահան Թամոյան
Կամո Դավթյան
Սահակ Աբրոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Էդվին Գրիգորյան

1. **Տեղեկություններ «ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/11» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին**

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են Armeps կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 15.04.2024թ-ին Մարտունու համայնքապետարանում, Շահումյան 2 հասցեում, ժամը 16:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

2. **«ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/11» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**

2.1 Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	Կապի միջոց Էլ. Փոստ, հեռախոսահամար
1	«ԱՐՄ ԴՈՐ ՍՏՐՈՅ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծակքար, 5փ. տ9	nairi_aleqsanyan@mail.ru +37494001811
2	«ԱՐՇԻՆ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ, Զ.Շիոյան 63	ashishanyan@gmail.com +37494657781
3	«ՄԱԼԿ» ՍՊԸ	ք.Գյումրի Տիգրան Մեծի 1	malkgroup@yahoo.com +37443522581
4	«Պրոֆ-Էքսպերտ» ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Տիգրան Մեծի փ. 28շ. 27բն.	gnumnerfeqspert@gmail.com +37494250879

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

3. **Տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահաջներին դրանց համապատասխանության մասին**

3.1 Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝ արձանագրել է հետևյալը.

3.1.1 **Պարտադիր ներկայացման փաստաթղթեր.**

- «ԱՐՄ ԴՈՐ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են անհամապատասխաններություններ՝ մասնավորապես.
- Բացակայում են աշխատակազմում ներգրավված անձանց գրավոր համաձայնությունները

- «Պրոֆ-Էքսպերտ» ՍՊԸ-ի ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են անհամապատասխաններություններ՝ մասնավորապես.

- Հավելվածը 1-ում սխալ է նշված պատվիրատուի անվանումը
- Հավելված 2-ում սխալ է նշված գնման ընթացակարգը
- Բոլոր փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ այդ թվում հավելված 2-ը:

- «ԱՐՇԻՆ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի և «ՄԱԼԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են պարտադիր ներկայացման ենթակա բոլոր փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահաջներին:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ Կարգ/ 41-րդ կետի պահաջներով, որոշեց՝ կասեցնել նիստը և ծանուցել մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում /ծանուցումը ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում/ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. «ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/11» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակիցների առաջարկած գները

N	Կազմակերպության անվանումը	Նախահաշվայի ն արժեքը /թվերով և տառերով/	Ինքնարժեք և շահույթ /թվերով և տառերով/	ԱԱՀ /թվերով և տառերով/	Ընդհանուր գինը /թվերով և տառերով/
Չափաբաժին 1		**8 000 000**	ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Մյասնիկյան, Գևորգ Չիրոյան և Սայաթ Նովա խաչմերուկից մինչև Ն. Գետաշեն բնակավայրի թիվ 2 միջնակարգ դպրոցի խաչմերուկ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ		
1	«ԱՐՇԻՆ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ		**3 890 000**	**0**	**3 890 000**
2	«ՄԱԼԿ» ՍՊԸ		**4 800 000**	**960 000**	**5 760 000**
3	«ԱՐՄ ԴՈՐ ՍՏՐՈՅ» ՍՊԸ		**4 999 900**	**0**	**4 999 900**
4	«Պրոֆ-Էքսպերտ» ՍՊԸ		**3 840 000**	**0**	**3 840 000**
Չափաբաժին 2		**3 000 000**	ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ, Ծովինար, Արծվանիստ միջհամայնքային ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ		
1	«ԱՐՇԻՆ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ		**1 470 000**	**0**	**1 470 000**
2	«ԱՐՄ ԴՈՐ ՍՏՐՈՅ» ՍՊԸ		**1 999 900**	**0**	**1 999 900**
3	«Պրոֆ-Էքսպերտ» ՍՊԸ		**720 000**	**0**	**720 000**

*Մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 18.04.2024թ. ժամը 11:00-ին

5. **«ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/11» ծածկագրով գնման ընթացակարգի սույն արձանագրության 3-րդ կետով արձանագրությունների շտկման մասին.**

- 16.04.2024թ., ոչ ավտոմատ ծանուցմամբ, վերոհիշյալ կազմակերպություններին ուղարկվել է անհամապատասխանությունները շտկելու ծանուցում, որը մասնակիցների կողմից շտկվել է և գնահատող հանձնաժողովը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված, «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 42-րդ կետի համաձայն, մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվել է բավարար:
- «Պրոֆ-էքսպերտ» ՍՊԸ-ին շտկման ծանուցում չի ուղարկվել, քանի որ գնային առաջարկը շտկման ենթակա չէ: Գնային առաջարկը ենթակա է շտկման միայն, երբ հաստատված է մասնակցի ստորագրությամբ, սակայն բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը:

6. **Ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին**

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

6.1 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել «ԱՐՇԻՆ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ին:

6.2 «Պրոֆ-էքսպերտ» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման՝ ըստ ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի:

6.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

6.4 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և օրենսդրությամբ սահմանված կարգով, մասնակցին կներկայացվի պայմանագիր կնքելու առաջարկ:

6.5 Օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշատանքային օրվա ընթացքում (կանխիկ փողի ձևով ներկայացնելու դեպքում) ներկայացնել պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով: Եթե ապահովումները ներկայացվելու են բանկային երաշխիքի տեսքով, ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 10 (տասը) աշխատանքային օր: Համապատասխան ապահովումները ներկայացնելուց հետո օրենքով սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Թաթուլ Դավթյան

Անդամներ՝ _____ Վարդան Մանուկյան

_____ Կամո Դավթյան

_____ Վահան Թամոյան

_____ Սահակ Աբրոյան

Քարտուղար՝ _____ Էդվին Գրիգորյան